ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ | 2023 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ

# ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

IOM
UN MIGRATION

Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները պատկանում են վեկույցի հեղինակներին և կարող են չհամընկնել Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) տեսակետների հետ: Օգտագործված անվանումները և նյութի ներկայացումը ողջ հրապարակման մեջ չեն ենթադրում ՄՄԿ-ի կողմից այս կամ այն երկրի, տարածքի, քաղաքի կամ շրջանի կամ նրա իշխանությունների իրավական կարգավիճակի կամ դրա սահմանների վերաբերյալ որևէ կարծիքի արտահայտում:

ՄՄԿ-ն հավատարիմ է այն սկզբունքին, որ քաղաքակիրթ և կանոնակարգված միգրացիան շահեկան է միգրանտների և հասարակության համար: ՄՄԿ-ի՝ որպես միջկառավարական մարմնի փոխգործակցությունը միջազգային հանրության իր գործընկերների հետ նպատակուղղված է օգնելու միգրացիայի ոլորտում առկա մարտահրավերների լուծմանը, միգրացիայի հետ կապված հարցերի վերաբերյալ իրազեկության բարձրացմանը, միգրացիայի միջոցով սոցիալ-տնտեսական զարգացման խթանմանը, ինչպես նաև պաշտպանելու միգրանտների արժանապատվությունն ու ապահովելու նրանց բարեկեցությունը:

---

Մինչ սույն հրատարակությունում առկա տեղեկատվության ճշգրտումը՝ ո՛չ Economist Impact-ը, ո՛չ էլ նրա դուստր կազմակերպությունները պատասխանատվություն կամ պարտավորություն չեն կրում այս տեղեկատվության արժանահավատության համար:

Հրատարակիչ՝ Միգրացիայի միջազգային կազմակերպություն
Մորիյոնպ փող. 17
1211, Ժնև 19
Շվեյցարիա
Հեռ.՝ +41 22 717 9111
Ֆաքս՝ +41 22 798 6150
Էլ. փոստ՝ hq@iom.int
Վեբ կայք՝ www.iom.int

Սույն վեկույցը հրապարակվել է առանց ՄՄԿ թարգմանչական բաժնի վավերացման:

Հետազոտությունը և վերլուծությունը՝

ECONOMIST IMPACT

Պարտադիր մեջբերումներ. Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ) 2024, *Միգրացիայի կառավարման ցուցիչներ 2023- Հայաստանի Հանրապետություն*. ՄՄԿ, Ժնև

---

ISBN 978-92-9268-809-7 (PDF)

**© ՄՄԿ 2024**

CC BY NC ND

Որոշ իրավունքներ պաշտպանված են: Այս հրատարակությունը հասանելի է՝
Creative Commons Attribution- NonCommercial- NoDerivs 3.0 IGO License (CC BY-NC-ND 3.0 IGO).*

Մանրամասների համար խնդրում ենք ծանոթանալ՝ Copyright and Terms of Use.

Այս հրապարակումը չպետք է օգտագործվի, հրատարակվի կամ տարածվի առևտրային շահի ստացման կամ դրամական փոխհատուցման նպատակներով, այլ միմայն կրթական նպատակների, օրինակ՝ ուսումնական ձեռնարկներում ընդգրկելու համար:

Առևտրային օգտագործման կամ հետագա իրավունքների և արտոնագրման հարցերով դիմել՝ publications@iom.int.

* https://creativecommons.org/licenses/by-nc-nd/3.0/igo/legalcode

PUB2024/051/EL

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ | 2023 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ

# ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

IOM
UN MIGRATION

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


ՆՊԱՏԱԿՆԵՐԸ // 6

**ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ** // 7

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** // 9

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ // 12

**ՀԱՄԱՏԵՔՍՏԸ** // 15

**ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ** // 17

**ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ** // 21

**ՄԿՑ-Ն ԳՆԱՀԱՏՈՒՄԻՑ ՀԵՏՈ** // 45

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ // 47

# ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Միգրացիայի կառավարման ցուցիչների (ՄԿՑ) նպատակն է օգնել կառավարություններին գնահատել իրենց միգրացիոն քաղաքականություններն ու ռազմավարությունները՝ բացահայտելու հաջողված գործելաձևերը և հետագա զարգացման ներուժ ներկայացնող ոլորտները, վերջիններիս կողմից այդպիսի դիմում ներկայացվելիս:

ՄԿՑ-ները դաշտ են բացում կառավարությունների և այլ համապատասխան շահառուների հետ երկխոսությունների համար՝ բացահայտելու առջևում ընկած գերակայությունները: Գործընթացը դիտարկելով որպես կառավարության առաջնահերթություն, ՄԿՑ-ներն առաջարկում են աջակցություն ազգային և տեղական մակարդակներում՝ ուղղված միգրացիայի կառավարման համակարգերի աստիճանական բարելավմանը:

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

| | |
|---|---|
| ԱԿԿՄԳՀ | Անվտանգ, կազմակերպված ու կանոնավոր միգրացիայի գլոբալ համաձայնագիր |
| ԱՊՀ | Անկախ Պետությունների Համագործակցություն |
| ՔՀԿ | Քաղաքացիական հասարակության կազմակերպություն |
| ՎՎԵՑ | Վերադարձի և վերաինտեգրման եվրոպական ցանց |
| ՄՔՄՄԿ | Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն |
| ՄՄԿ | Միգրացիայի միջազգային կազմակերպություն |
| ԱԱԾ | Ազգային անվտանգության ծառայություն |
| ՄՔԾ | Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն |
| ՄԿՑ | Միգրացիայի կառավարման ցուցիչներ |
| ՆԳՆ | Ներքին գործերի նախարարություն |
| ՄԿՀ | Միգրացիայի կառավարման հայեցակարգ |
| ԱՍՀՆ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| ՓՀ | Փոխըմբռնման հուշագրեր |
| ՀԿ | Հասարակական կազմակերպություն |
| ԿԶՆ-ներ | Կայուն զարգացման նպատակներ |
| ՄԱԿ ՓԳՀ | ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատար |
| ARLIS | Հայաստանի իրավաբանական տեղեկատվական համակարգ |

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

> «Միգրացիան կազմել է մարդկության պատմության ամբողջ ընթացքի մասը, և մենք գիտակցում ենք, որ այն բարգավաճման, նորարարության ու կայուն զարգացման աղբյուր է մեր գլոբալացված աշխարհում, և որ այդ դրական ազդեցությունները կարող են լավագույնս օգտագործվել միգրացիայի կառավարումը բարելավելու միջոցով» [1]:

Շարժունության հետ կապված հնարավորություններն առավելագույնի հասցնելու և մարտահրավերներին դիմակայելու անհրաժեշտությունը ճանաչվեց 2030 թ. Կայուն զարգացման օրակարգում միգրացիայի ներառմամբ և Անվտանգ, կազմակերպված ու կանոնավոր միգրացիայի գլոբալ համաձայնագրի (ԱԿԿՄԳՀ) ընդունմամբ: 2030-ի օրակարգում Թիրախ 10.7-ի ներդրման արդյունքում «պլանավորված և պատշաճ կերպով կառավարվող միգրացիոն քաղաքականություն» սահմանելը դարձավ անհրաժեշտ: Ահա թե ինչու Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ) 2015 թ. մշակեց Միգրացիայի կառավարման հայեցակարգը[2] (ՄԿՀ): Այս հայեցակարգով[3] ամփոփ պատկերացում է տրվում կատարյալ մոտեցում մշակելու վերաբերյալ, որով ցանկացած պետություն հնարավորություն է ստանում որոշել, թե իրեն ինչ է հարկավոր միգրացիայի պատշաճ և տվյալ երկրին համապատասխան կառավարման համար: Նույն տարում ՄՄԿ-ը Economist Impact-ի հետ համատեղ մշակեց Միգրացիայի կառավարման ցուցիչները (ՄԿՑ-ներ)՝ գրեթե 100 ցուցիչներից բաղկացած ստանդարտների հավաքածու, որն օգնում է պետություններին գնահատել միգրացիայի կառավարման իրենց կառույցների համապարփակ լինելը:

Ցուցիչները ելակետային նշանակություն ունեն կառավարություններին խորհրդատվական գործընթացում ներգրավելու համար այն իմաստով, որ նրանց թույլ է տալիս բացահայտել լավ զարգացած ոլորտները և այլ այնպիսի ոլորտներ, որոնք կշահեն հետագա զարգացումից, իսկ ամենակարևորը՝ նախանշել տվյալ երկրի առջև կանգնած մասնավոր մարտահրավերներին և հնարավորություններին համապատասխան առաջնահերթությունները:

ՄԿՑ-ները բնութագրվում են երեք գլխավոր կամ հիմնարար առանձնահատկություններով՝

1. ՄԿՑ գործընթացը **կամավոր** վարժանք է. ՄԿՑ-ներն անցկացվում են այն երկրներում, որոնք դիմել են գործընթացին մասնակցելու համար.
2. ՄԿՑ-ները **զգայուն են ազգային առանձնահատկությունների նկատմամբ**. ՄԿՑ-ները ճանաչում են յուրաքանչյուր համատեքստի վանական մարտահրավերներն ու հնարավորությունները, և, հետևաբար, չեն առաջարկում ստանդարտ լուծումներ բոլորի համար, այլ ավելի շուտ ուղղված են զարկ տալու քննարկումների անցկացմանն այն մասին, թե ինչ կարող է նշանակել լավ կառավարվող միգրացիան.
3. ՄԿՑ-ները ներկայացնում են **գործընթաց**. ՄԿՑ գործընթացը երկրների միգրացիոն ծրագրերի վերաբերյալ տվյալների հավաքագրման ստատիկ գործիք չէ: Այն ավելի շուտ դինամիկ վարժանքի առաջին քայլն է, որը կառավարություններին կարող է հնարավորություն տալ բացահայտելու իրենց միգրացիոն քաղաքականության այն հիմնահարցերը, որոնք ունեն հետագա զարգացման կարիք կամ կարող են օգուտ քաղել կարողությունների զարգացումից:

ՄԿՑ-ներն ընդունում են, որ բոլոր երկրներն ունեն միգրացիայի հետ կապված տարբեր իրավիճակներ, մարտահրավերներ և հնարավորություններ: Հետևաբար, ՄԿՑ-ները երկրները չեն դասակարգում նրանց միգրացիոն քաղաքականությունների մշակման կամ իրականացման տեսանկյունից:

Վերջապես, ՄԿՑ-ները գնահատական չեն տալիս միգրացիոն քաղաքականությունների արդյունքներին կամ ինստիտուցիոնալ արդյունավետությանը: Փոխարենը, դրանք գրանցում են միգրացիային առնչվող քաղաքականությունները և հանդես են գալիս որպես չափորոշիչ ծրագիր, որը հստակ ու խորքային իմացություն է ձևավորում քաղաքականությունների շրջանակում ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ: Պետություններն այդ միջոցառումները կարող են հետագայում նկատի առնել իրենց միգրացիոն կառավարումը կատարելագործելու առաջընթացի ճանապարհին:

Երկրի վերաբերյալ սույն ակնարկը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ Հայաստան) միգրացիայի կառավարման կառույցների կարգացած ոլորտների, ինչպես նաև հետագա կարգացման ներուժ ունեցող ոլորտների ամփոփ պատկերը, որոնց գնահատումը կատարվել է ըստ ՄԿՑ-ների[4]:

---

1 Միավորված ազգերի կազմակերպություն, գլոբալ համաձայնագիր անվտանգ, կազմակերպված ու կանոնավոր միգրացիայի վերաբերյալ (A/RES/73/195, 11 հունվար, 2019), պարբերություն 8:
Տես՝ www.iom.int/resources/global-compact-safe-orderly-and-regular-migration/res/73/195

2 «Միգրացիոն կառավարումը» վերաբերում է միգրացիայի կարգավորմանն ու միգրանտներին պաշտպանելուն ուղղված ինստիտուտների, իրավական շրջանակների, մեխանիզմների և գործելակերպի համակարգին: Այն օգտագործվում է գրեթե հոմանիշ «միգրացիայի կառավարում» տերմինի հետ, թեև վերջինս երբեմն օգտագործվում է նաև պետական մակարդակով անդրսահմանային տեղաշարժը կարգավորելու նեղ ակտին անդրադառնալու համար:

3 ՄՄԿ խորհուրդ, Միգրացիայի կառավարման ծրագիր, 106-րդ նիստ, C/106/40 (4 նոյեմբեր 2015), էջ 1, ծանոթագրություն 1:
Տես՝ https://governingbodies.iom.int/system/files/en/council/106/C-106-40-Migration-Governance-Framework.pdf

4 ՄԿՑ-ը նախաձեռնությունը քաղաքականությունների գնահատման ծրագիր է, որը ղեկավարվում է ՄՄԿ-ի կողմից և իրականացվում է Economist Impact-ի աջակցությամբ: Ֆինանսավորումը տրամադրում են ՄՄԿ անդամ պետությունները:

# ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

## ՄԿԾ

ՄՄԿ-ի ՄԿԾ-ն ներկայացնում է աջակցության էական տարրերը՝ պլանավորված և պատշաճորեն կառավարվող միգրացիայի համար: Այն փորձում է համախմբված, կապակցված ու համապարփակ ձևով ներկայացնել երեք սկզբունքների և երեք նպատակների մի խումբ, որոնք հաշվի առնելու և իրականացնելու դեպքում կապահովվի միգրացիայի մարդասիրական ու կարգավոր լինելը, որից կշահեն միգրանտները և հասարակությունը:

Հիմքում դնելով՝

### ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. ***Հետևել*** *միջազգային չափորոշիչներին և իրականացնել միգրանտների իրավունքները.*
2. ***Ձևավորել*** *քաղաքականություն՝ օգտագործելով ապացույցներ և «համակառավարման» մոտեցում.*
3. ***Համագործակցել*** *գործընկերների հետ՝ միգրացիայի և միգրացիային առնչվող խնդիրների լուծման համար:*

### ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. ***Խթանել*** *միգրանտների և հասարակության սոցիալ-տնտեսական բարօրությունը.*
2. ***Արդյունավետորեն*** *արձագանքել շարժունության չափերին ճգնաժամերի պայմաններում.*
3. ***Ապահովել****, որ միգրացիան կատարվի անվտանգ, կազմակերպված ու արժանապատիվ ձևով:*

## ՄԿՑ-ներ

Որոնք օժանդակում են չափել

### Ի՞ՆՉ ԵՆ ՄԿՑ-ները

**Մի խումբ ցուցիչներ, որոնք հստակ ու խորը պատկերացում են տալիս քաղաքականության լծակների մասին և որոնք պետությունները կարող են օգտագործել իրենց միգրացիոն կառավարման կառույցներն ուժեղացնելու համար.**

**Գործիք, որը բացահայտում է հաջողված գործելաձևերը և այն ոլորտները, որոնք հնարավոր է էլ ավելի կարգացնել.**

**Խորհրդակցական գործընթաց, որը երկխոսություններ է խթանում միգրացիայի կառավարման շուրջ՝ պարզաբանելով, թե ինչպիսին կարող է լինել «պատշաճ կառավարվող միգրացիան» ԿԶՆ թիրախ 10.7-ի և Միգրացիայի համաշխարհային համաձայնագրի իրականացման համատեքստում:**

### Ի՞ՆՉ ՉԵՆ ԴՐԱՆՔ

**Պետությունների աստիճանակարգում չեն.**

**Քաղաքականությունների ազդեցության գնահատում չեն.**

**Ցուցումներ չեն տալիս:**

SUSTAINABLE DEVELOPMENT GOALS

Global Compact FOR Migration

Նշում. «Գլոբալ համաձայնագիրը համահունչ է 2030 թ. Կայուն զարգացման օրակարգի 10.7 թիրախին, որով Անդամ պետությունները հանձն են առել համագործակցել միջազգային մակարդակով՝ դյուրացնելու անվտանգ, կազմակերպված և կանոնավոր միգրացիան»: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս www.iom.int/global-compact-migration:

ՄԿՑ-ները բաղկացած են միգրացիոն կառավարման վեց տարբեր չափումների ներքո խմբավորված գրեթե 100 ցուցիչներից, որոնք բխում են ՄԿԾ կատեգորիաներից:

**ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ (ԷՋ 7)**

Այս տիրույթի ցուցիչները վերաբերում են նրան, թե միգրանտներին որքանով են հասանելի որոշակի սոցիալական ծառայություններ, ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը և սոցիալական ապահովությունը: Դրանք ուշադրություն են դարձնում նաև ընտանիքի վերամիավորմանը, աշխատանքի հասանելիությանը և կացության ու քաղաքացիության հասանելիությանը: Ներառված են նաև ստորագրված և վավերացված միջազգային կոնվենցիաները:

**ՀԱՄԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ (ԷՋ 9)**

Այս ոլորտի ցուցիչներով գնահատվում են երկրների միգրացիոն քաղաքականություններին առնչվող ինստիտուցիոնալ, իրավական և կարգավորող ծրագրերը: Այս ոլորտը ուշադրություն է դարձնում նաև միգրացիայի ազգային ռազմավարությունների առկայությանը, որոնք համահունչ են զարգացման նպատակներին և զարգացման օտարերկրյա ջանքերին, ինչպես նաև միգրացիայի կառավարման հետ կապված ինստիտուցիոնալ թափանցիկությանը և հետևողականությանը:

**ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԷՋ 12)**

Այս կատեգորիան կենտրոնացած է երկրների՝ միգրացիային առնչվող հարցերում այլ պետությունների և համապատասխան ոչ կառավարական դերակատարների, ներառյալ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ համագործակցության ջանքերի վրա:

**ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԲԱՐՕՐՈՒԹՅՈՒՆ (ԷՋ 14)**

Այս ոլորտի ցուցիչները գնահատում են պետությունների քաղաքականությունները միգրանտների կրթական և մասնագիտական որակավորումների ճանաչման վերաբերյալ, ուսանողների միգրացիան կարգավորող դրույթները և պետությունների միջև երկկողմ աշխատանքային համաձայնագրերի առկայությունը: Այս տիրույթում են նաև սփյուռքի ներգրավվածության հարցերը ծագման երկրում և միգրանտների տրանսֆերտները:

##  ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԵՐԸ ՃԳՆԱԺԱՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (ԷՋ 16)

Այս կատեգորիան ուսումնասիրում է երկրների պատրաստվածության տեսակը և մակարդակը, երբ բախվում են շարժունության չափերին ճգնաժամերի ժամանակ: Հարցերը վերաբերում են քաղաքացիների և ոչ քաղաքացիների համար առկա գործընթացներին՝ կապված աղետների և կլիմայի փոփոխության հետ, այդ թվում՝ թե արդյոք մարդասիրական օգնությունը միգրանտներին հասանելի է նույն չափով, որքան քաղաքացիներին:

##  ԱՆՎՏԱՆԳ, ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԵՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՄԻԳՐԱՑԻԱ (ԷՋ 17)

Այս կատեգորիան միգրացիայի կառավարման երկրների մոտեցումները դիտարկում է՝ ըստ սահմանների հսկողության և օրենքի կիրարկման քաղաքականությունների, միգրանտների ընդունելության չափանիշների, խոշոր և անսպասելի միգրացիոն հոսքերի դեպքում պատրաստվածության ու ճկունության, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի տեսանկյունից:

# ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Հայաստանի Հանրապետությունն ունի միգրացիոն երկար պատմություն: Ավանդաբար Հայաստանը հանդիսացել է արտագաղթի երկիր: 2013 և 2015 թվականներին հավաքագրված ազգային ներկայացուցչական հետազոտության տվյալների հիման վրա Հայաստանից միգրացիոն հոսքերի գնահատումները ցույց են տալիս տարեկան 30,000 մեկնումների միջին մակարդակ 2007-ից 2012 թվականներին, և 35,000 տարեկան՝ 2013-ից 2015 թվականներին[5]: Այնուամենայնիվ, նույնիսկ առանց միգրացիայի, Հայաստանի Հանրապետությունը բախվում է բնակչության թվաքանակի նվազման՝ ծնելիության 1,6 մակարդակի պատճառով (Քեմփբել և այլոք, 2018): 2000-2016 թվականներին Հայաստանի Հանրապետության բնակչությունը նվազել է 228,300-ով՝ հասնելով 2,998,300-ի (պաշար)[6]: Վերջին տարիներին, սակայն, ավելի շատ մարդ է ժամանում, քան մեկնում: Ժամանումները ներառում են երկիր վերադարձող հայեր, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցողներ հակամարտող երկրներում, ինչպես նաև աշխատանքային ներգաղթյալներ տարբեր երկրներից:

Համաշխարհային բանկի տվյալները ցույց են տալիս, որ 2022 թ. Հայաստանում ստացված անձնական տրանսֆերտները կազմել են ՀՆԱ-ի 18,9%-ը[7]:

---

5 ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 23-ի նիստի N 12 արձանագրային որոշման հավելված, Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականություն 2017-2021 թթ.

6 ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 23-ի նիստի N 12 արձանագրային որոշման հավելված, Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականություն 2017-2021 թթ.

7 Միգրացիոն տվյալների պորտալ. Տես՝ https://www.migrationdataportal.org/international-data?i=stock_abs_&t=2020&cm49=51

# ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

# ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

## ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Բոլոր միգրանտները, անկախ իրենց միգրացիոն կարգավիճակից, կարող են օգտվել կառավարության կողմից ֆինանսավորվող առողջապահական ծառայություններից, որոնք տրամադրվում են առողջապահության նախարարության կողմից այնպես, ինչպես քաղաքացիներին՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի համաձայն (1996թ., վերջին փոփոխությունը՝ 2022 թ.) (Հոդված 2):

Բոլոր օտարերկրյա բնակիչներն ունեն աշխատանքի ընդունվելու նույն հնարավորությունները, ինչպես երկրի քաղաքացիները: Ժամանակավոր, մշտական և հատուկ ռեզիդենտները, Հայաստանի հետ միջազգային պայմանագրեր ունեցող երկրների քաղաքացիները և ազգությամբ հայ օտարերկրյա քաղաքացիները կարող են աշխատել առանց աշխատանքի թույլտվության:

Միգրանտները կարող են Հայաստանի քաղաքացիություն ստանալ երկրում օրինական կերպով մշտապես երեք տարի բնակվելուց հետո՝ պայմանով, որ տիրապետեն հայոց լեզվին և ծանոթ լինեն Սահմանադրությանը: Մշտական կացության համար դիմելու համար միգրանտները պետք է ունենան բնակարան և ապրուստի միջոցներ և երկրում բնակված լինեն առնվազն երեք տարի:

## ՀԱՄԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

2022 թվականի դեկտեմբերին Ազգային ժողովն ընդունեց «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որով ստեղծվեց Ներքին գործերի նախարարությունը (ՆԳՆ): ՆԳՆ-ն ներառում է Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը (ՄՔԾ), Ոստիկանությունը և Փրկարար ծառայությունը: ՄՔԾ-ի կանոնադրությունն ընդունվել է 2023 թվականի մարտին: ՆԳՆ-ն պատասխանատու է Հայաստանում ընդհանուր միգրացիոն քաղաքականության և ռազմավարական ծրագրի մշակման և համակարգման համար, մինչդեռ ՄՔԾ-ն պատասխանատու է միգրացիոն գործընթացների կարգավորման համար և ակտիվորեն մասնակցում է քաղաքականության մշակման գործընթացներին:

Հայաստանի տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայությունը (ներկայիս ՄՔԾ) 2021 թ. մշակել է Միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը և դրա գործողությունների ծրագիրը (ընդունվել է 2021 թ. մայիսին, վերջին անգամ փոփոխվել է 2021 թ. օգոստոսին), որը ծառայում է որպես միգրացիայի ազգային ռազմավարություն:

Կառավարությունը դեռևս չունի միգրացիոն հարցերի միջգերատեսչական համակարգման մեխանիզմ, թեև նախատեսվում է ստեղծել միգրացիոն քաղաքականության մշակման ու իրականացման միջգերատեսչական հանձնաժողով:

## ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանը ստորագրել է միգրացիայի վերաբերյալ փոխըմբռնման հուշագրեր (ՓՀ) և համաձայնագրեր Դանիայի (2003), Շվեյցարիայի (2003), Գերմանիայի (2006), Բենիլյուքսի (Բելգիա, Նիդեռլանդներ և Լյուքսեմբուրգ, 2009), Շվեդիայի (2009), Նորվեգիայի (2010), Չեխիայի (2011), Ռուսաստանի Դաշնության (2011), Ֆրանսիայի (2013 և 2016),

Բուլղարիայի (2018), Միացյալ Արաբական Էմիրությունների (2022) և Ավստրիայի (2023) հետ: Բացի այդ, 2014 թվականի հունվարից ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության և Եվրամիության միջև առանց թույլտվության բնակվող անձանց ռեադմիսիայի մասին համաձայնագիրը»:

Հայաստանի կառավարությունը իր սփյուռքի առանձին անդամներին և սփյուռքի համայնքներին վարգացման քաղաքականության օրակարգի ձևավորման և իրականացման գործին ներգրավում է միայն կիսաֆորմալ ձևով, մասնավորապես «իԳործ» ծրագրի միջոցով: Այս ծրագիրն ունի խթաններ՝ սփյուռքի բնակչության վերադարձը, նրանց կողմից ներդրումների կատարումը և երկրի վարգացման օրակարգում ներգրավվելը խրախուսելու համար:

## ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԲԱՐՕՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանն ունի մեխանիզմներ՝ պաշտպանելու արտերկրում աշխատող իր քաղաքացիների իրավունքները «Քաղաքացիության մասին» օրենքի (1995 թ., վերջին փոփոխությունը՝ 2022թ.) և «Հայաստանի միգրացիայի կառավարման հայեցակարգ»-ի (2021թ.) միջոցներով: Երկիրը նաև ունի միջոցներ՝ խթանելու կանանց և միգրանտների ֆինանսական ներգրավումը 2021-2025 թվականների ֆինանսական կրթության ծրագրի միջոցով: Հայաստանում աշխատաշուկայի վերաբերյալ տվյալները հավաքվում են վիճակագրական կոմիտեի միջոցով՝ տարանջատված ըստ միգրացիայի կարգավիճակի և սեռի: Այս տվյալները ներառում են ինֆորմացիա աշխատանքային տարիքի բնակչության, աշխատանքային գործունեության տեսակների, զբաղվածության և գործազրկության մասին: Այնուհետև հավաքված ինֆորմացիան տարանջատվում է ըստ տարիքային խմբերի, սեռի, ծննդյան երկրի, քաղաքացիության, բնակության կարգավիճակի, ամուսնության կարգավիճակի և կրթության: Սակայն դեռևս չեն կատարվել ազգային գնահատումներ, որոնք կմշտադիտարկեն աշխատաշուկայի պահանջարկը ներգաղթածների համար կամ արտագաղթածների ազդեցությունը ներքին աշխատաշուկայի վրա: Ցավոք, աշխատուժի տարեկան վիճակագրական հետազոտությունը նման տվյալներ չի պարունակում:

## ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԵՐԸ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Գոյություն ունեն հաղորդակցման համակարգեր, որոնցով հանրությունը Ներքին գործերի նախարարության կայքից տեղեկացվում է ճգնաժամերի վարգացման բնույթի և օգնություն ստանալու եղանակների մասին: Բացի այդ, Միգրացիայի կառավարման ցուցիչների և գործողությունների ծրագրի (2021) նպատակներից մեկը միգրացիոն ճգնաժամերին, ներառյալ՝ բնական և մարդածին աղետներին արձագանքելու կարողությունների մեծացումն է:

«Սեյսմիկ պաշտպանության մասին» օրենքը (2002 թ., վերջին փոփոխությունը՝ 2020թ.) նախատեսում է երկրում երկրաշարժային իրավիճակների կառավարման ծրագիր և նշում է օտարերկրյա քաղաքացիներին ու քաղաքացիություն չունեցող անձանց որպես անհատներ ում նկատմամբ գործում են ծրագրի դրույթները: Սակայն ո՛չ Ներքին գործերի նախարարության կանոնադրությունը (2023) և ո՛չ էլ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքը (2005թ., վերջին փոփոխությունը՝ 2023 թ.) միգրանտներին չեն վերաբերում: Նմանապես՝ մարդկանց շարժունության նկատառումները բացակայում են «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողություններ» ծրագրից և 2021-2025 թթ. միջոցառումների ցանկից (2021 թ.):

## ԱՆՎՏԱՆԳ, ԿԱՐԳԱՊԱՀ ԵՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՄԻԳՐԱՑԻԱ

Հայաստանի կառավարությունը 2019 թ.-ին ընդունել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրա 2020-2022 թթ. գործողությունների ծրագիրը (վերջին անգամ փոփոխվել է 2021 թ.-ին): 2023 թ.-ին Հայաստանի կառավարությունն ընդունել է Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի 7-րդ ազգային գործողությունների 2023-2025 թթ ծրագիրը: Վերը նշված ծրագրերը ներառում են օրենսդրական բարեփոխումներ և գործողություններ իրազեկության բարձրացման, տվյալների հավաքագրման, տվյալների բազաների վարմանև կրթական հաստատություններում պայմանների բարելավման վերաբերյալ:

Գոյություն ունեն աշխատանքային շահագործման դեմ պայքարի միջոցներ, որոնք վերաբերում են բոլոր աշխատավորներին, սակայն միգրանտների դեպքում մասնավոր միջոցառումներ չեն նախատեսում՝ Աշխատանքային օրենսգրքի (2004 թ., վերջին փոփոխությունը՝ 2023 թ.) և Քրեական օրենսգրքի (2021 թ., վերջին փոփոխությունը՝ 2023 թ.) միջոցով: Անհայտ կորած միգրանտներին որոնելու և հայտնաբերելու ազգային համակարգի ստեղծումը զարգացման ներուժ ունեցող ևս մեկ բնագավառ է:

# ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ

# 1 ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

## 1.1. Վավերացված միջազգային կոնվենցիաներ

**Աղյուսակ 1.** Միջազգային կոնվենցիաների ստորագրում և վավերացում

| Կոնվենցիայի անվանումը | Վավերացված (տարին) |
|---|---|
| Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) միգրացիա վբաղվածության համար կոնվենցիան (վերանայված), 1949 (No. 97) | **Այո (2006)** |
| Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա փախստականների կարգավիճակի մասին (հայտնի է նաև Փախստականների մասին կոնվենցիա անվանումով), 1951 | **Այո (1993)** |
| Միավորված ազգերի կոնվենցիաները քաղաքացիություն չունենալու մասին, 1954 և 1961 | **Այո (1994)** |
| ԱՄԿ կոնվենցիա միգրանտ աշխատավորների մասին (լրացուցիչ դրույթներ), 1975 (Թիվ 143) | **Այո (2006)** |
| Միավորված ազգերի կոնվենցիաները երեխաների իրավունքների մասին (UNCRC), 1989 | **Այո (1993)** |
| Միավորված ազգերի կոնվենցիան բոլոր միգրանտ աշխատավորների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին (ICRMW), 1990 | **Ոչ (ստորագրվել է 2013 թ.)** |

## 1.2. Միգրացիայի կառավարումը. կարգացած ոլորտների օրինակներ

Բոլոր միգրանտները, անկախ իրենց միգրացիոն կարգավիճակից՝ նույն հիմունքներով ինչ որ քաղաքացիները, կարող են օգտվել առողջապահության նախարարության կողմից մատուցվող կառավարության ֆինանսավորած առողջապահական ծառայություններից: Սահմանադրությունը (2015, վերջին փոփոխությունը՝ 2020 թ.) ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի առողջության պահպանման իրավունք (հոդված 85), իսկ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքը (1996 թ.) (Հայաստանի օրենսդրությանը և միջազգային պայմանագրերին համապատասխան) նախատեսում է անվճար առաջնային բուժօգնության և շտապօգնության իրավունք օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար (հոդված 13): Բացի այդ, 2022 թ. ուկրաինական ճգնաժամի սկսվելուն պես առողջապահության նախարարությունը հրապարակել է շրջաբերական, ըստ որի Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ)[8] և Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) անդամ պետությունների[9] քաղաքացիներն իրավունք ունեն օգտվել անվճար առաջնային բուժօգնությունից՝ իրենց ընտրած հաստատությունում և գրանցումից հետո միաժամանակ

[8] ԵՏՄ անդամ պետություններն են Հայաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը և Ռուսաստանի Դաշնությունը:
[9] ԱՊՀ անդամ երկրներն են Հայաստանը, Ադրբեջանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը, Մոլդովայի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը, Տաջիկստանը, Թուրքմենստանը և Ուզբեկստանը:

անվճար հիվանդանոցային բժշկական օգնությունից և սպասարկումից իրավունք ունեն օգտվել ցածր եկամուտ ունեցող միգրանտներն ու նրանց ընտանիքները: Հայաստանի Հանրապետության կառավարության «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» N 318-Ն որոշմամբ սահմանվել է «հասարակության սոցիալապես անապահով խմբերին» պատկանող և անվճար բժշկական օգնություն և ծառայություններ ստանալու իրավունք ունեցող անձանց ցանկը, որոնք երաշխավորված են պետության կողմից: Ցուցակում ընդգրկված են ապաստան հայցողները և նրանց ընտանիքի անդամները:

Բոլոր միգրանտները, անկախ իրենց միգրացիոն կարգավիճակից՝ նույն հիմունքներով, ինչ որ քաղաքացիները, կարող են օգտվել կառավարության կողմից ֆինանսավորվող կրթությունից և մասնագիտական ուսուցումից: Սահմանադրության համաձայն՝ պետական հաստատություններում նախնական և միջնակարգ կրթությունն անվճար է, և յուրաքանչյուր ոք ունի մրցութային հիմունքներով անվճար մասնագիտական և բարձրագույն կրթություն ստանալու իրավունք (հոդված 38): «Կրթության մասին» օրենքը (1999 թ., վերջին փոփոխությունը՝ 2023 թ.) սահմանում է, որ կրթության իրավունքը երաշխավորված է «անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, ունեցվածքից կամ այլ պայմաններից» (հոդված 6): «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը հաստատելու մասին» N 700-Ն որոշման մեջ (2011 թ. վերջին փոփոխությունը՝ 2012թ.) նշված է, որ «օտարերկրացիները» իրավունք ունեն ընդունվելու իրենց նախընտրած մասնագիտական ուսումնական հաստատություն (հոդված 4): Նույն որոշման համաձայն՝ օտարերկրացիները բարձրագույն ուսումնական հաստատություններում կարող են սովորել՝ (ա) պայմանագրային հիմունքներով (վճարովի), բ) միջպետական և միջգերատեսչական պայմանագրերով կամ համաձայնագրերով՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) օտարերկրացիներին տրամադրվող տեղերի շրջանակներում և (գ) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սփյուռքահայերի ընդունելության համար տրամադրված՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի սահմաններում (հոդված 14):

Հայաստանում միգրանտները, քաղաքացիներին հավասար, իրավունք ունեն օգտվել սոցիալական պաշտպանության որոշ տեսակներից: Ըստ Սահմանադրության՝ յուրաքանչյուր ոք ունի մայրության, ընտանիքի, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, կերակրողին կորցնելու, ծերության և գործազրկության դեպքերում սոցիալական ապահովության իրավունք (հոդված 83): «Սոցիալական աջակցության մասին» օրենքը (2014 թ., վերջին փոփոխությունը՝ 2022 թ.) սահմանում է, որ Հայաստանում «կացության կարգավիճակ ունեցող, քաղաքացիություն չունեցող և փախստականի կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիները» ունեն սոցիալական աջակցության իրավունք (հոդված 18): Սա ներառում է խորհրդատվություն, վերականգնում, բնաիրային օգնություն, կացարանի ապահովում, խնամք, իրավական օգնություն, կենսաթոշակներ, նպաստներ, դրամական վճարներ, զբաղվածության ծառայություններ և բժշկական օգնություն (հոդված 8): Սակայն ըստ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի, (2010 թ., վերջին փոփոխությունը՝ 2022 թ.) կենսաթոշակի իրավունքը միգրանտների համար կիրառելի է միայն երկրում նրանց բնակության ժամանակահատվածում: Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ չունեցող օտարերկրացին կենսաթոշակի իրավունք ունի, եթե նա կենսաթոշակ չի ստանում այն պետությունից, որի քաղաքացին է (հոդված 7):

Հայաստանը պայմանագրեր ունի այլ երկրների հետ սոցիալական ապահովության իրավունքների և վաստակած նպաստների, այդ թվում՝ ծերության կենսաթոշակների տեղափոխելիության վերաբերյալ: Երկիրը հանդիսանում է ԱՊՀ «Աշխատանքային միգրացիայի և աշխատավոր-միգրանտների սոցիալական պաշտպանության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի կողմ (1994 թ.), որը ներառում է պայմանագրերը, հարկերը և կենսաթոշակները[10]: Հայաստանը հանդիսանում է նաև «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատողների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի (2019թ.) կողմ[11], որը թույլ է տալիս անդամ պետությունների միջև կենսաթոշակային իրավունքների տեղափոխելիություն: Ըստ համաձայնագրի՝ մի անդամ պետության քաղաքացին, ով աշխատում է մեկ այլ անդամ պետությունում, պարտավոր է մասնակցել ընդունող երկրի սոցիալական ապահովության կենսաթոշակային համակարգին:

Հայաստանը թույլատրում է միգրանտների ընտանիքների վերամիավորումը կացության բոլոր կատեգորիաների ներքո: «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (2006թ., վերջին փոփոխությունը՝ 2023թ.) սահմանում է կացության երեք կատեգորիա՝ ժամանակավոր, մշտական և հատուկ: Օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների ընտանիքի անդամներին[12] ժամանակավոր կացության կարգավիճակ տրվում է յուրաքանչյուր անգամ 1 տարի ժամկետով: 16-րդ հոդվածի համաձայն՝ մշտական բնակիչների ընտանիքի անդամները կարող են դիմել մշտական բնակության համար, որը տրվում է հինգ տարի ժամկետով: Ընտանիքի վերամիավորումը հնարավոր է նաև կացության հատուկ կարգավիճակ ունեցող միգրանտների համար, որը տրվում է օտարերկրյա քաղաքացիություն ունեցող էթնիկ հայերին և ուժի մեջ է տասը տարի՝ երկարաձգման հնարավորությամբ, օրենքի 18-րդ հոդվածին համապատասխան:

Բոլոր օտարերկրյա ռեզիդենտներն ունեն աշխատանքի ընդունվելու նույն հնարավորությունը, ինչ որ քաղաքացիները, ներառյալ զբաղվածությունը մասնավոր հատվածում: Սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության, ինչպես նաև աշխատանքի պաշտպանության իրավունք, որն ապահովում է հարկադիր աշխատանքի արգելումը (հոդված 57): Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 15-րդ հոդվածը (2004 թ., վերջին փոփոխությունը՝ 2023թ.) սահմանում է, որ աշխատանքի իրավունքը հավասարապես ճանաչվում է ՀՀ բոլոր քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար: Գործատուները կարող են աշխատանքային/ծառայության պայմանագրեր կնքել օտարերկրյա քաղաքացիների հետ՝ օգտագործելով ժամանակավոր կացության թույլտվությունը[13] կամ հանրային ծառայությունների նույնականացման համարը[14]՝ համաձայն «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի: Ընդ որում, Հայաստանի հետ միջազգային պայմանագրեր ունեցող երկրների քաղաքացիները, ովքեր ունեն ժամանակավոր, մշտական և հատուկ կացություն[15], ինչպես նաև

---

10 Այս համաձայնագրի կողմ են տասներկու պետություններ՝ Հայաստանը, Ադրբեջանը, Բելառուսը, Վրաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանի Դաշնությունը, Մոլդովայի Հանրապետությունը, Տաջիկստանը, Թուրքմենստանը, Ուկրաինան և Ուզբեկստանը:

11 ԵԱՏՄ անդամ երկրներն են Հայաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը և Ռուսաստանի Դաշնությունը:

12 «Ընտանիքի անդամը» սահմանվում է որպես անձի ամուսինը, ծնողը, զավակը, քույրը կամ եղբայրը, տատիկը կամ պապիկը կամ թոռը:

13 Ժամանակավոր ռեզիդենտների համար:

14 Մշտական և հատուկ ռեզիդենտների կամ այն երկրների քաղաքացիների համար, որոնց հետ Հայաստանի Հանրապետությունը երկկողմանի պայմանագրեր ունի, և ազգությամբ հայ օտարերկրյա քաղաքացիների համար:

15 Հատուկ կացության կարգավիճակ տասը տարի ժամկետով շնորհվում է Հայաստանի վարչապետի կողմից հայկական ծագում ունեցող օտարերկրյա քաղաքացիներին և այն անձանց, ովքեր նշանակալի ծառայություններ են մատուցել Հայաստան պետությանն ու ազգին և/կամ Հայաստանում զբաղված են տնտեսական ու մշակութային գործունեությամբ:

ազգությամբ հայ օտարերկրյա քաղաքացիները[16] և այլոք[17] կարող են աշխատել առանց աշխատանքի թույլտվության՝ իրենց կացության թույլտվության տևողության ընթացքում (հոդված 23):Մնացած բոլոր միգրանտներին, բացառությամբ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների (Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան և Ռուսաստան) ներգաղթածներին, անհրաժեշտ է ունենալ աշխատանքի թույլտվություն: Միասնական էլեկտրոնային հարթակի մասին կառավարության որոշման (2021) համաձայն, միգրանտները կարող են փոխել աշխատանքը նույն աշխատանքային թույլտվության ներքո: Ե՛վ Աշխատանքային օրենսգիրքը, և՛ «Օտարերկրացիների մասին» օրենքը երաշխավորում են զբաղվածության հավասար հնարավորություն՝ անկախ սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, քաղաքացիությունից և կատարվող աշխատանքին չկապված այլ պայմաններից («Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի հոդված 22):

Միգրանտները՝ ըստ «Քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի (1995 թ., վերջին Փոփոխությունը՝ 2022 թ.)[18], կարող են Հայաստանի քաղաքացիություն ստանալ երկրում օրինական կերպով երեք տարի բնակվելուց հետո՝ պայմանով, որ տիրապետեն հայոց լեզվին և ծանոթ լինեն Սահմանադրությանը:

Հայաստանում միջոցներ են նախատեսված ատելության հողի վրա հանցագործությունների, բռնության, այլատյացության և միգրանտների նկատմամբ խտրականության դեմ պայքարի համար: Սահմանադրությունն արգելում է խտրականությունը սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկական և սոցիալական պատկանելության, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնության պատկանելու, ունեցվածքի, հաշմանդամության, տարիքի և այլ անհատական ու սոցիալական հատկանիշների հիման վրա (հոդված 29): Միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը և դրա գործողությունների ծրագիրը (2021), որպես իր ինը նպատակներից մեկը՝ ներառում է միգրանտների իրավունքների և շահերի պաշտպանությունը: Ծրագրի 7-րդ բաժնի 4-րդ նպատակում նշված է, որ կառավարությունը նպատակ ունի կանխել երկրում միգրանտների իրավունքների ոտնահարման բոլոր ձևերը: Այն նաև նպատակ ունի խթանել աջակցության տարբեր ծառայությունների մատուցումը, ներառյալ՝ մարդասիրական, առողջապահական, սոցիալական, տեղեկատվական և հոգեբանական աջակցություն ճգնաժամերից տուժածներին: Բացի այդ, ծրագրի համաձայն, միգրանտների իրավունքների պաշտպանությունը Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի առաջնահերթությունն է, որը իրականացվում է նրանց իրավունքների պաշտպանությամբ ու խթանմամբ, այդ թվում՝ անվճար իրավաբանական օգնության տրամադրման, բողոքների և դիմումների ստացման, համապատասխան պետական պաշտոնյաներին (սահմանապահներին) տրամադրվող վերապատրաստման և իրազեկման միջոցառումների միջոցով:

---

16 Այս դեպքում հայկական ազգությունը վերաբերում է Հայաստանի հետ «էթնիկ/մշակութային/կրոնական» կապերին՝ ի տարբերություն Հայաստանի քաղաքացիություն ունենալու:

17 Կարճ ժամանակով ժամանած օտարերկրյա դիվանագետները և նրանց ընտանիքի անդամները, մշակութային գործիչները և մարզիկները, օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հիմնադիրները, տնօրենները կամ լիազորված ներկայացուցիչները, օտարերկրյա առևտրային կազմակերպությունների աշխատակիցները, մասնագետները, որոնք ժամանել են վերանորոգելու և տեղադրելու մեքենաներ, սարքավորումների, հաստոցների (մինչև 6 ամիս ժամկետով), արտասահմանյան լրագրողներ, այցելու դասախոսներ, արձակուրդների ընթացքում փոխանակումների շրջանակում ժամանած ուսանողներ, բարձր որակավորում ունեցող աշխատողներ: Մասնագետների ցանկը սահմանվում է ՀՀ կառավարության աշխատանքային թույլտվություն տրամադրելու մասին https://www.arlis.am/documentview.aspx?docid=105802 որոշմամբ (2016):

18 Առաջին երկու պահանջները չեն գործում այն օտարերկրացիների դեպքում՝ ովքեր վերջին երկու տարիներին օրինական գրանցված ամուսնության մեջ են եղել Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ և այդ երկու տարիների ընթացքում օրինականորեն բնակվել են Հայաստանի Հանրապետությունում առնվազն 365 օր, ում ծնողը (ծնողները) ծնվել է (են) Հայաստանի Հանրապետությունում կամ ունեցել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, ովքեր 1995 թ. հունվարի 1-ից հետո հրաժարվել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից և փախստականներ ու քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում: Բոլոր երեք պահանջները հանվում են ազգությամբ հայ օտարերկրյա քաղաքացիների (էթնիկ հայերի), ինչպես նաև Հայաստանի Հանրապետությանը տնտեսության, գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության կամ սպորտի բնագավառներում բացառիկ ծառայություններ մատուցած անձանց դեպքում:

## 1.3. Հետագա պարգացման ներուժ ունեցող ոլորտներ

Ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցողներն իրավունք ունեն դիմել մշտական բնակության համար (միանգամից հինգ տարի ժամկետով), եթե նրանք ունեն բնակարան և ապրուստի միջոցներ և առնվազն երեք տարի ապրել են երկրում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օտարերկրացիների մասին օրենքի (հոդված 16):

Երկրից դուրս բնակվող Հայաստանի քաղաքացիները չեն կարող քվեարկել համապետական ընտրություններում: Այնուամենայնիվ, Ընտրական օրենսգիրքը (2016 թ., վերջին փոփոխությունը՝ 2022 թ.) սահմանում է, որ դիվանագիտական ծառայության մեջ գտնվող հայերը (և նրանց ընտանիքի անդամները), երկարամյա ծառայության կամ օտարերկրյա պետություններում սովորող պինվորականները և արտերկրում բնակվելու դեպքում ունեն համապետական ընտրություններում էլեկտրոնային եղանակով քվեարկելու իրավունք (հոդված 62): 2021 թ.-ին Հայաստանի Ազգային ժողովի ընտրություններին էլեկտրոնային եղանակով մասնակցել է ընտրելու իրավունք ունեցող 650 քաղաքացիներից 500-ը:[19]

Հայաստանի Հանրապետությունը միգրանտներին առաջարկում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայություններ՝ներառյալ ծննդյան, հայրության, որդեգրման, ամուսնության, ամուսնալուծության, անվանափոխության և մահվան գրանցում, սակայն, ինչպես քաղաքացիների դեպքում, այդ ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ է ինքնությունը հաստատող փաստաթուղթ՝ ըստ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների մասին օրենքի (2021 թ., վերջին փոփոխությունը՝ 2022 թ.):

[19] Տես: https://res.elections.am/images/doc/e_vote.result20.06.21.pdf

# 2 ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ՝ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՎ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՀԱՄԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

## 2.1. Միգրացիայի կառավարում. վարգացած ոլորտների օրինակներ

Ներքին գործերի նախարարությունը պատասխանատու է Հայաստանում ընդհանուր միգրացիոն քաղաքականության և ռազմավարական ծրագրի մշակման ու իրականացման համար: Ըստ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի (2018, վերջին փոփոխությունը՝ 2022), նախարարությունը մշակում և իրականացնում է կառավարության քաղաքականությունը միգրացիայի կառավարման ոլորտում: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Միգրացիոն ծառայության[20] և Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության հիման վրա ՆԳՆ կազմում ստեղծվել է Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն (ՄՔԾ): ՄՔԾ-ի կանոնադրությունն ընդունվել է 2023 թվականի մարտին: ՄՔԾ-ի նպատակներն են միգրացիոն գործընթացների պետական կարգավորումը, ապաստանի համակարգի գործունեության կազմակերպումը և իրականացումը, Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած անձանց և փախստականների, ինչպես նաև երկարաժամկետ ներգաղթյալների ինտեգրումը հասարակությանը, ռեադմիսիայի գործընթացի բարելավումը, ՀՀ վերադարձած քաղաքացիների վերաինտեգրումը և Հայաստանի Հանրապետության անձնագրային համակարգի կազմակերպումը և ներդրումը:

ՄՔԾ-ի կանոնադրության ուժի մեջ մտնելուց ի վեր ՄՔԾ-ի կազմում գործում է Անձնագրային և վիզաների վարչությունը[21]: «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-458-Ն 2022 թ.-ի դեկտեմբերի 16-ի օրենքը սահմանում է, որ Անձնագրային և վիզաների վարչության պաշտոնատար անձինք, ովքեր վերապատրաստում են անցել «Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ծառայողների պաշտոնի նշանակման համար վերապատրաստման» կարգը հաստատելու մասին ՀՀ փոխվարչապետի որոշման համաձայն[22], նշանակվում են ՄՔԾ քաղաքացիական ծառայության պաշտոններում և համարվում են քաղաքացիական ծառայող (3-րդ հոդվածի 10-րդ կետ):

Միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը և գործողությունների ծրագիրը (2021) բաղկացած է 10 բաժնից, ներառյալ՝ ամփոփ տեղեկություններ դեպի երկիր և երկրից դուրս միգրացիոն հոսքերի մասին, կառավարման սկզբունքներն ու գերակայությունները, միգրացիայի պետական քաղաքականության թիրախ խմբերը, հիմնախնդիրները և առաջարկվող գործողությունները, միգրացիոն քաղաքականության ռազմավարական նպատակներն ու ուղղությունները և ակնկալվող արդյունքները: Փաստաթուղթը սահմանում է միգրացիայի կառավարման երեք սկզբունք՝ համակառավարում, համագործակցություն և փաստահեն քաղաքականության մշակում, իսկ որպես թիրախ խմբեր սահմանվում են օտարերկրացիները, հայրենադարձված անձինք, ներքին տեղահանված անձինք, ապաստան հայցողները, փախստականները, հարկադիր ներգաղթածները և արտագաղթածները: Հայեցակարգն ունի ինը նպատակ, ներառյալ՝ միգրանտների իրավունքների և շահերի պաշտպանություն, անկանոն և անօրինական միգրացիայի դեմ պայքար, սահմանային հսկողություն և մուտքի ու ելքի բարելավված կառավարում, ինտեգրում և վերաինտեգրում և միգրացիոն ճգնաժամերին արձագանքման պատրաստվածության բարձրացում:

---

[20] Միգրացիոն ծառայությունը հանդիսանում էր միգրացիայի համար պատասխանատու մարմինը մինչև Ներքին գործերի նախարարության ստեղծումը 2022 թ.:

[21] Նախկինում ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն

[22] Տես՝ ՀՀ փոխվարչապետի որոշումը «Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ծառայողների պաշտոնի նշանակման համար վերապատրաստման» կարգը հաստատելու մասին Հասանելի է. https://migration.am/content/pdf/verapatrastum_karg.pdf

Միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը բովանդակում է որոշ գենդերայգային դրույթներ: Բաժին 3-ում նշված է, որ Հայաստանի միգրացիոն քաղաքականությունը համահունչ է ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ), մասնավորապես ԿԶՆ թիրախ 8.8-ին, որի նպատակն է «պաշտպանել աշխատանքային իրավունքները և խթանել անվտանգ ու ապահով աշխատանքային միջավայրը բոլոր աշխատավորների, ներառյալ աշխատավոր միգրանտների, մասնավորապես՝ կին միգրանտների և նրանց համար, ովքեր կատարում են պատահական աշխատանք»: Հայեցակարգը ներառում է նաև սահմանապահների մշակութային և գենդերայգային արձագանքման կարողությունները զարգացնելու նպատակ:

Միաժամանակ միգրացիայի կառավարման պետական հայեցակարգը անդրադառնում է միգրանտների ինտեգրմանը՝ որպես իր ինը նպատակներից մեկը, ներառելով հետևյալը՝ կրթության, առողջապահության և սոցիալական աջակցության հասանելիության բարելավում, միգրանտների իրավունքների ուժեղացված պաշտպանություն, մշակութային ինտեգրում, զբաղվածության աջակցություն և տնտեսական ներառում, ինչպես հյուրընկալ միջավայրի ստեղծում: Բացի այդ, 2018-2022 թթ. Հայաստանն ընգրկվել է Վերադարձի և վերաինտեգրման եվրոպական ցանցում (ՎՎԵՑ) (անգլ.՝ ERRIN), միջկառավարական համագործակցության ծրագիրն իրականացվում է Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ՄՔՄՄԿ) կողմից և գործում է ՄՔԾ-ի շրջանակներում: ՎՎԵՑ-ը 16 երկրներից բաղկացած կոնսորցիում է[23], որը նպաստում է միգրանտների վերադարձին և վերաինտեգրմանը, ովքեր չեն կարող կամ չեն ցանկանում մնալ Եվրոպայում: ՎՎԵՑ ծրագրի արդյունքում կառուցվել է Հայաստանում վերադարձի և վերաինտեգրման հաստատությունը (ՎՎՀ)՝ խթանելու կառավարությունների միջև համագործակցությունը հետժամանում աջակցության, Հայաստանի միգրացիայի կառավարման կարողությունների հզորացման և հայ քաղաքացիների սոցիալական և տնտեսական վերաինտեգրմանը աջակցելու համար, ովքեր վերադառնում են կամավոր կամ ոչ կամավոր ԵՄ և ՎՎԵՑ անդամ երկրներից[24]:

Հայաստանում գործում է ներգաղթի կարգավորման ազգային օրենսդրություն՝ «Օտարերկրացիների մասինե օրենքը (2006թ., վերջին փոփոխությունը՝ 2023թ.) և ,Փախստականների և ապաստանի մասին» օրենքը (2008թ., վերջին փոփոխությունը՝ 2021թ.): «Օտարերկրացիների մասին» օրենքը ներառում է դրույթներ երկիր մուտք գործելու, վիզայի տեսակների, երկրից ելքի, երկրի տարածքով տարանցման, կացության կարգավիճակի, երկրում օտարերկրացիների աշխատանքի, արտաքսման և կալանավորման վերաբերյալ: «Փախստականների և ապաստանի մասին» օրենքը ներառում է դրույթներ ապաստան հայցողների և փախստականների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ, պետական մարմինների և Հայաստանում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) լիազորությունների վերաբերյալ, ապաստանի տրամադրման կարգի և ժամանակավոր պաշտպանության վերաբերյալ:

Վարչապետի աշխատակազմին առընթեր Սփյուռքի գործերի գերագույն հանձնակատարի գրասենյակը պատասխանատու է հայկական սփյուռքի բնակչության հետ համագործակցության աշխատանքների համակարգման համար[25]: Ըստ գրասենյակի կանոնադրության և «Հայաստանի Հանրապետության սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի աշխատակազմի կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման (2019 թ., վերջին փոփոխությունը՝ 2020 թ.)՝ գրասենյակը պատասխանատու է հայրենադարձությանն աջակցելու և վերադարձող միգրանտների ու սփյուռքահայերի վերաինտեգրմանը նպաստելու համար: Սփյուռքի հետ գրասենյակը համագործակցում է մի շարք ծրագրերի միջոցով, այդ թվում՝ Սփյուռքի

[23] Ավստրիա, Բելգիա, Գերմանիա, Դանիա, Իսպանիա, Լյուքսեմբուրգ, Հունաստան, Մալթա, Միացյալ Թագավորություն, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Շվեդիա, Շվեյցարիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա:

[24] Տես՝ https://www.icmpd.org/our-work/projects/european-return-and-reintegration-network-project-in-armenia-errin-armenia

[25] Նախքան Սփյուռքի գործերի գերագույն հանձնակատարի գրասենյակի ստեղծումը Հայաստանի Հանրապետությունն ուներ Սփյուռքի նախարարություն, որը ստեղծվել էր 2008 թ. սեպտեմբերին և գործեց մինչև 2018 թ. հունիսը:

երիտասարդ դեսպան[26], Քայլ դեպի տուն[27], իԳործ[28], ՆերՈւժ[29], Սփյուռքը կապի մեջ է[30] և GovTech Launchpad[31]:

Հայաստանի միգրացիայի և քաղաքացիության ծառայության կայքում կան միգրացիայի վերաբերյալ հստակ և թափանցիկ կանոններ ու կանոնակարգեր, որոնք հասանելի են հանրությանը և հեշտ են ծանոթանալու ու հասկանալու համար: Կայքը պարունակում է ինֆորմացիա ապաստանի, փախստականների ինտեգրման, վերադարձի և վերաինտեգրման, աշխատանքի նպատակով ժամանակավոր կացության, օրինական միգրացիայի, անկանոն միգրացիայի, Հայաստանի միգրացիոն պատկերի վերաբերյալ: Ներգաղթողների համար կայքը պարունակում է նաև միգրացիայի վիճակագրություն և օգտակար տեղեկություններ: Միգրացիային վերաբերող օրենսդրությունը հասանելի է պաշտոնական իրավական տվյալների բազայի՝ Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի (ARLIS[32]) միջոցով, իսկ վիզաների մասին ինֆորմացիան հասանելի է արտաքին գործերի նախարարության կայքում:

Միգրացիայի վերաբերյալ տվյալները Հայաստանում հավաքագրվում և հրապարակվում են տարեկան կտրվածքով: Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն հրապարակում է միգրացիայի վերաբերյալ տարեկան հաշվետվություն՝ հիմնված Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության վրա: Վերջին պեկույցը (2021 թ.-ի վերաբերյալ) հրապարակվել է 2023 թ. և հասանելի է հայերեն ու անգլերեն լեզուներով (ՄՄԿ և Արմստատ, 2023): Այն ներառում է տեղեկություններ միգրացիոն հոսքերի, միգրանտների համակցության և դրամական ու ապրանքային հոսքերի (տրանսֆերտների) վերաբերյալ: 2002 թ.-ից վիճակագրական կոմիտեն հրապարակում է վիճակագրական տարեգրքեր, որոնք բովանդակում են ինֆորմացիա միգրացիոն հոսքերի մասին՝ ժամանողների և մեկնողների թվական տվյալներ, միգրացիայի պատճառները, ծագման և մեկնման երկրները, և նպատակակետը, ինչպես նաև միգրանտների թվաքանակի, նրանց տարիքային և սեռային կազմի, կրթական մակարդակի, զբաղվածության, առողջապահական ծառայությունների հասանելիության, տրանսֆերտների վերաբերյալ տվյալներ, ի թիվս այլոց: Բացի այդ, միգրացիոն ծառայության կայքում 2012 թ.-ից սկսած՝ ամեն տարի հրապարակվում են ապաստանի տրամադրման, առկա և վերջերս տրված կացության թույլտվությունների, ռեադմիսիայի և սահմանների հատման մասին տվյալներ:

ՄՔԾ-ն հավաքում և ներդաշնակեցնում է տարբեր պետական մարմինների հավաքագրած միգրացիոն տվյալները՝ առաջնորդվելով «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ գլխի դրույթներով: Ծառայությունն ապահովում է միգրացիոն տվյալների հասանելիությունը պետական այլ մարմինների, այդ թվում՝ Հայաստանի ազգային անվտանգության ծառայության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Արտաքին գործերի նախարարության համար:

---

26 «Սփյուռքի երիտասարդ դեսպանը» մեկամյա ծրագիր է, որի նպատակն է օգնել հայկական սփյուռքի երիտասարդներին ընդլայնել իրենց պատկերացումները Հայաստանի քաղաքական, սոցիալական ու տնտեսական հարցերի վերաբերյալ. աջակցել երիտասարդների ներգրավմանը համայնքային կյանքում. և մեծացնել նրանց գործունեության արդյունավետությունը:

27 «Քայլ դեպի տունը» երկշաբաթյա ծրագիր է, որի նպատակն է պահպանել և զարգացնել Սփյուռքի երիտասարդության հայկական ազգային ինքնությունը:

28 iGorts-ը հայկական սփյուռքի մասնագետներին հրավիրում է ծառայելու ինչպես հանրային հատվածում, այնպես էլ կառավարությունում:

29 ՆերՈւժը ստարտափների ծրագիր է, որի նպատակն է խրախուսել սփյուռքից տեխնոլոգիաների և բիզնես տաղանդների վերադարձը Հայաստան:

30 Diaspora Connected-ը ձգտում է սփյուռքը կապել Գերագույն հանձնակատարի գրասենյակի հետ առցանց տեսախորհրդաժողովների միջոցով՝ նպատակ ունենալով պահպանել կապերը, բացահայտել և լուծել խնդիրները, խորացնել համագործակցությունը:

31 GovTech Launchpad նախագիծը ձգտում է ներգրավել տեխնոլոգիական լուծումներ՝ հայրենադարձության և Հայաստանի ու սփյուռքի բնակչության միջև անջրպետը կամրջելու համար:

32 ARLIS պորտալը (http://www.arlis.am/) հրապարակում է Հայաստանում ընդունված բոլոր իրավական ակտերը՝ հասանելի դարձնելով հանրությանը և ներառում է ինֆորմացիա նոր ընդունվող և/կամ փոփոխվող օրենքների վերաբերյալ:

## 2.2. Հետագա կարգացման ներուժ ունեցող ոլորտներ

Ազգային մակարդակում միգրացիոն խնդիրների միջգերատեսչական համակարգման մեխանիզմ չկա: Բացի այդ ջանքեր չեն գործադրվում միգրացիայի հետ կապված քաղաքականությունների ուղղահայաց կապը բարելավելու համար: Այդուհանդերձ, 2024 թ.,Ներքին գործերի նախարարության գլխավորությամբ, նախատեսվում է ձևավորել միգրացիոն խորհուրդ՝ որպես միգրացիոն քաղաքականության մշակման և իրականացման միջգերատեսչական կոմիտե: Հայաստանի միգրացիայի պետական կառավարման հայեցակարգի 4-րդ բաժնում նշված է, որ կառավարությունը նպատակ ունի երկրում միգրացիայի հարցերում կիրառել համակառավարման մոտեցում: Սակայն ըստ Հայաստանի՝ ազգային մակարդակով Անվտանգ, կազմակերպված ու կանոնավոր միգրացիայի գլոբալ համաձայնագրի իրականացման կարգավիճակի մասին ազգային կամավոր վերանայման զեկույցի (2020), միգրացիայի հետ կապված խնդիրների համակարգումը մնում է մարտահրավեր՝ քաղաքականության մշակման և իրականացման տեսանկյունից:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ որպես գենդերային հավասարության և բազմազանության խթանման համար պատասխանատու գործակալության, պաշտոնական ներգրավման մեխանիզմների ստեղծումը միգրացիային առնչվող հարցերի օրակարգի ձևավորման և իրականացման համար իրենից ներկայացնում է հետագա կարգացման ոլորտ:

Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը ներքին տեղահանվածներին նշում է որպես իր թիրախային ութ խմբերից մեկը, սակայն Գործողությունների ծրագիրը կոնկրետ գործողություններ չի նախատեսում՝ ուղղված շրջակա միջավայրի վատթարացմամբ պայմանավորված միգրացիային: Մինչդեռ, ինչպես նշված է հայեցակարգում, Հայաստանի կառավարությունը, ընդգծելով միգրացիոն ճգնաժամերին արձագանքելու իր պատրաստակամությունը, նախաձեռնել է «Աղետի կամ ռազմական գործողության հետևանքով առաջացած միգրացիոն հոսքերի կառավարման գործողությունների ծրագրի» մշակումը: 2019 թվականին Գործողությունների ծրագրի նախագիծն առաջարկել է Արտակարգ իրավիճակների նախարարությունը (ներկայումս՝ Փրկարար ծառայություն), սակայն այն չի ընդունվել:

# 3 ՆԵՐԳՐԱՎԵԼ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ՝ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԻԳՐԱՑԻԱՅԻՆ ԵՎ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻՆ

## 3.1.Միգրացիայի կառավարում. կարգացած ոլորտների օրինակներ

Հայաստանը մասնակցում է տարածաշրջանային մի քանի գործընթացների և ֆորումների: Մասնակցում է Բուդապեշտի գործընթացին[33], որը հիմնվել է 1993 թ.՝ որպես «Եվրոպական երկրների միջև ինֆորմացիայի փոխանակման գործիք ԵՄ ընդլայնմանը նախորդող հարթակում և որպես ֆորում միգրացիայի կառավարումը բարելավելու համար»: Միաժամանակ Հայաստանն անդամակցում է Պրահայի գործընթացին, որը միգրացիայի հարցերով տարածաշրջանային խորհրդակցական գործընթաց է, հիմնվել է 2009 թ. և ընդգրկում է Եվրոպայի 47 պետություններ[34]՝ նպատակ ունենալով «ուժեղացնել համագործակցությունը մասնակից երկրների միջև միգրացիայի կառավարման ոլորտում, ուսումնասիրել ու կարգացնել միգրացիոն սերտ գործընկերության համաձայնեցված սկզբունքներն ու տարրերը»: Ավելին, Հայաստանը Միգրացիայի, շարժունության և սահմանների ինտեգրված կառավարման արևելյան գործընկերության խմբի անդամ է, որը ստեղծվել է 2001 թ. Արևելյան գործընկերների[35] և Եվրամիության (ԵՄ) միջև՝ միգրացիայի և ապաստանի քաղաքականությունների շուրջ երկխոսության կարգացման և լավագույն փորձի փոխանակման դյուրացման, Արևելյան գործընկերների ապաստանի ու միգրացիոն համակարգերի ուժեղացման նպատակով:

Հայաստանի կառավարությունը 2019 թ. մասնակցել է Բուդապեշտի գործընթացի 6-րդ նախարարական խորհրդաժողովին, որի ժամանակ 38 երկրներ ընդունեցին Ստամբուլյան հանձնառությունները «Միգրացիայի համար Մետաքսի ճանապարհի գործընկերության վերաբերյալ» և դրա գործողությունների ծրագիրը, որը ներառում է համագործակցության վեց առաջնահերթ ուղղություններ: Մասնավորապես, երկրները պայմանավորվածություններ ձեռք բերեցին հետևյալ հարցերում՝ բարելավել կանոնավոր միգրացիայի և շարժունության պայմանները, խթանել աշխատաշուկայի գնահատումները և շարժունության վերաբերյալ համաձայնագրերը, մշակել շրջանաձև և ժամանակավոր միգրացիայի ծրագրեր, ավելացնել ուսանողների շարժունությունը, հեշտացնել իսկական ճանապարհորդների, ներառյալ ուսանողների, հետազոտողների և գործարարների պատշաճ կառավարվող շարժունությունը և բարելավել կանոնների ու ընթացակարգերի թափանցիկությունը:

Հայաստանն այլ երկրների հետ ստորագրել է միգրացիայի վերաբերյալ փոխըմբռնման հուշագրեր և պայմանագրեր: Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Ռուսաստանի Դաշնության միգրացիոն դաշնային ծառայության միջև ստորագրված անօրինական միգրացիայի դեմ պայքարում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիրը (2011 թ.) պարունակում է դրույթներ հետևյալի մասին՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության տարածքում «ապօրինի» բնակվող անհատների նույնականացում, որպես փախստական չճանաչված և «անօրինական միգրանտների» արտաքսում, հանցագործների հետախուզություն, ինֆորմացիոն և վերլուծական նյութերի փոխանակություն, «անօրինական

[33] 2023 թ. մայիսի դրությամբ Բուդապեշտի գործընթացն ունի 52 անդամ և 7 դիտորդ պետություն www.iom.int/budapest-process

[34] Ավելին՝ Պրահայի գործընթացի մասին տե՛ս www.pragueprocess.eu/en/about/states-partners

[35] Արևելյան գործընկերության նպատակն է ամրապնդել և խորացնել քաղաքական և տնտեսական հարաբերությունները ԵՄ, ԵՄ անդամ պետությունների և գործընկեր երկրների միջև: Գործընկերության անդամներն են Հայաստանը, Ադրբեջանը, Բելառուսը, Վրաստանը, Մոլդովայի Հանրապետությունը և Ուկրաինան:

միգրացիայի» դեմ պայքարի ոլորտում գործող պաշտոնյաների վերապատրաստում և մասնագիտական վարգացում և համատեղ գիտական հետազոտություններ «անօրինական միգրացիայի» վերաբերյալ: «Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև աշխատանքային միգրացիայի կանոնակարգման մասին» համաձայնագիրը (2018) վերաբերում է կարճաժամկետ (մինչև երեք տարի կացության իրավունքով) և սեզոնային (մինչև ինը ամիս) աշխատողներին և ներառում է դրույթներ հավաքագրման և ընտրության, աշխատանքային պայմանների և սոցիալական իրավունքների, աշխատանքային միգրանտների վերադարձի վերաբերյալ: Հայաստանը միգրանտների վերադարձի և հետընդունման մասին համաձայնագրեր է ստորագրել նաև Դանիայի (2003), Շվեյցարիայի (2003), Գերմանիայի (2006), Բենիլյուքսի երկրների (Բելգիա, Նիդեռլանդներ և Լյուքսեմբուրգ, 2009), Շվեդիայի (2009), Նորվեգիայի (2010), Ռուսաստանի (2010), Չեխիայի (2011), Ֆրանսիայի (2013), Արաբական Միացյալ Էմիրություններ (2022) և Ավստրիայի (2023) հետ: Բացի այդ, ՀՀ կառավարությունը համաձայնագիր ունի Ֆրանսիայի Հանրապետության կառավարության հետ միգրացիոն գործընկերության մասին (2016 թ.):

Ավելին, 2014թ. հունվարին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության և Եվրամիության միջև վիզաների տրամադրման դյուրացման մասին համաձայնագիրը» (2012) և «Հայաստանի Հանրապետության և Եվրամիության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագիրը (2013): Համապատասխանաբար ստեղծվել են Հայաստան-ԵՄ մուտքի արտոնագրերի տրամադրման դյուրացման կոմիտե և Հայաստան-ԵՄ հետընդունման կոմիտե՝ համապատասխանաբար սույն Համաձայնագրերի կատարումը վերահսկելու նպատակով:

Ներկայումս Հայաստանը մի քանի երկրների հետ մասնակցում է միգրացիայի վերաբերյալ երկկողմ բանակցությունների ու քննարկումների: Այսպես, հայ-ռուսական համատեղ աշխատանքային խումբը, որը ստեղծվել է 2010 թ., ամեն տարի հանդիպում է՝ ինֆորմացիայի փոխանակման և միգրացիայի հետ կապված ընդհանուր հարցերի քննարկման համար, այդ թվում՝ աշխատանքային միգրանտների իրավունքների պաշտպանության վերաբերյալ: 2023 թ. միգրացիայի, շարժունության և ռեադմիսիայի վերաբերյալ բանակցություններ էին ընթանում նաև Հնդկաստանի հետ:

Կառավարությունը քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ) պաշտոնապես ներգրավում է միգրացիայի հետ կապված խնդիրների օրակարգի ձևավորմանն ու իրականացմանը Վերադարձի եւ վերաինտեգրման հարցերով եռամսյա ֆորումի միջոցով: ՔՀԿ-ները մասնակցություն են ունեցել Հայաստանի միգրացիայի պետական կառավարման հայեցակարգի և գործողությունների ծրագրի (2021թ.) մշակմանը՝: Ֆորումի անդամները ներկայացնում են ինը միջազգային կազմակերպություններ, այդ թվում՝ ՄՄԿ, Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնը (ՄՔՄՄԿ), Ֆրանսիայի Ներգաղթի և ինտեգրման գրասենյակը (անգլ.՝ OFII), և տեղական ՔՀԿ-ներ, ինչպիսիք են Հայկական Կարիտասը, Մարդը կարիքի մեջ հասարակական կազմակերպությունը (ՀԿ) և Կայուն զարգացման հայկական հիմնադրամը՝ մի քանի պետական գերատեսչությունների հետ համատեղ:

2018 թ.-ից մինչև 2023 թվականի հունիսը գումարվել են ֆորումի 16 հանդիպումներ, որոնք հարթակ են դարձել տարբեր դերակատարների համար՝ ոլորտում հանդիպող գործառնական մարտահրավերները քննարկելու, փորձի փոխանակման, ինֆորմացիա և վիճակագրություն տարածելու և Հայաստանի քաղաքացիներին վերաինտեգրման աջակցություն տրամադրող կազմակերպությունների միջև համագործակցությունը խորացնելու համար:

2022 թ. Հայաստանի միգրացիոն ծառայության և Հայաստանում ՄԱԿՓԳՀ ներկայացուցչության կողմից կազմակերպվեց շահառու կողմերի հանդիպում՝ քննարկելու պետական գերատեսչությունների, ՀԿ-ների և միջազգային զարգացման գործակալությունների ներկայացուցիչներից կազմված միջգերատեսչական փորձագիտական աշխատանքային խմբի ստեղծումը՝ ապահովելու օրենսդրական փոփոխությունների մշակման ներառական խորհրդակցական գործընթաց՝ ի օգուտ Հայաստանում միջազգային պաշտպանություն հայցողների: ՄԱԿՓԳՀ/ՄՄԿ-ի կողմից իրականացվող ծրագրի շրջանակում ստեղծվեց փախստականների և ապաստան հայցողների մասին օրենսդրական նախագծերի մշակման միջգերատեսչական աշխատանքային խումբ: 2023 թ. աշխատանքային խումբն ունեցել է չորս հանդիպում:

Հայաստանը միացել է Եվրասիական տնտեսական միության պայմանագրին 2014թ.-ին,[36] որի նպատակը տարածաշրջանում աշխատանքային շարժունության խթանումն է: Պայմանագիրը երաշխավորում է միության ներսում քաղաքացիների համար աշխատանքի հասանելիություն՝ անկախ աշխատանքի թույլտվությունների, քվոտաների կամ այլ սահմանափակումների վերաբերյալ առանձին պետական կանոնակարգերից՝ ուղղված այդ երկրներում աշխատաշուկայի պաշտպանությանը, և փոխադարձաբար ընդունելով որակավորումները: Բացի այդ, Հայաստանը 1991 թ. ստեղծված Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) անդամ է, որի միջոցով անդամ երկրները համագործակցում են աշխատանքի և սոցիալական պաշտպանության հարցերում:

## 3.2. Հետագա զարգացման ներուժ ունեցող ոլորտներ

Կառավարության կողմից սփյուռքի և գաղթօջախների անդամների ներգրավումը զարգացման քաղաքականության օրակարգի ձևավորմանն ու իրականացմանը կրում է սոսկ կիսապաշտոնական բնույթ՝ iGorts ծրագրի միջոցով:[37] Սփյուռքի գործերի գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից 2020 թ. գործարկված iGorts-ը հրավիրում է հայկական սփյուռքի մասնագետներին ծառայելու Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի գրասենյակներում: Բացի այդ, Սփյուռքի գործերի գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից 2022 թ. հոկտեմբերին Հայաստանում անցկացրած Գլոբալ հայկական գագաթնաժողովը ներառում էր այնպիսի թեմաների քննարկում, ինչպիսիք են՝ ազգային անվտանգությունը, Հայաստանի շահերի պաշտպանությունը գլոբալ մակարդակով, հայրենադարձությունը, տնտեսական ներգրավվածությունը, հայապահպանությունը, սփյուռքի ներկայացուցչությունը Հայաստանի ղեկավար կառույցներում և ինքնակազմակերպումը սփյուռքի ներսում:

Կառավարությունը մասնավոր հատվածի հետ պաշտոնապես ներգրավված չէ միգրացիային առնչվող օրակարգի ձևավորման և իրականացման հարցերում: Սակայն մասնավոր հատվածը ներգրավված էր Հայաստանի միգրացիայի պետական կառավարման հայեցակարգի և գործողությունների ծրագրի մշակման գործում (2021):

[36] Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններն են Հայաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը և Ռուսաստանի Դաշնությունը: Միությունը անդամ երկրների համար ստեղծում է միասնական շուկա՝ համակարգելով նրանց միջև տնտեսական քաղաքականությունը:

[37] Մանրամասների համար տե՛ս http://diaspora.gov.am/en/programs/25/fellowship

# 4 ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՕՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

## 4.1. Միգրացիայի կառավարում. պարգացած ոլորտների օրինակներ

Հայաստանն ունի օտարերկրյա պետություններում աշխատող իր քաղաքացիների իրավունքները պաշտպանելու գործուն մեխանիզմներ: «Քաղաքացիության մասին» օրենքի (1995 թ., վերջին փոփոխությունը՝ 2022) համաձայն, օտարերկրյա պետություններում գտնվող քաղաքացիներն օգտվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունից և հովանավորությունից՝ վերջինիս դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով (հոդված 7): Հայաստանի միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը (2021) նշում է օտարերկրյա պետություններում աշխատող Հայաստանի քաղաքացիների իրավունքների պաշտպանության կարևորությունը (Բաժին 7, հոդված 22) և թվարկում է դրա կոնկրետ մեխանիզմները, ինչպիսիք են ընդունող երկրում սոցիալական աջակցության, առողջության պահպանության հասանելիությունը, ներառյալ՝ դեղատոմսով հատկացվող դեղորայքի անընդմեջ առաքումներով և կենսաթոշակային իրավունքների տեղափոխելիությամբ:

Գոյություն ունեն միգրանտների և նրանց ընտանիքների ֆինանսական ներառումը խթանող քաղաքականություններ: Ֆինանսական կրթության ազգային ռազմավարությունը (2014) նպատակ ունի բարելավել ֆինանսական գրագիտությունը՝ խթանելով ֆինանսական կրթությունը և ուսուցողական դասընթացները դպրոցներում, համալսարաններում ու աշխատավայրերում: 2021 թ. հուլիսին կառավարությունն ընդունեց Հայաստանի Հանրապետության ֆինանսական կրթման ծրագրի 2021-2025 թվականների գործողությունների պլան՝ որպես նշված ռազմավարությամբ սահմանված նպատակներին հասնելու կարևորագույն փուլեր: Ռազմավարության հիմնական նպատակները ներառում են՝ անձնական և ընտանեկան բյուջեների արդյունավետ կառավարման դյուրացումը, խնայողություններում ներդրումներ անելը, երկարաժամկետ ֆինանսական պլանավորումը և պարտքի արդյունավետ կառավարումը, ֆինանսական ծառայություններից օգտվելու անհատի իրավունքների մասին տեղեկացվածության բարձրացումը, ֆինանսական խարդախությունների կանխումը և գրագիտության խթանումը ֆինանսական և մակրոտնտեսական հիմնական ցուցիչները հասկանալու համար՝ անձնական և/կամ տնային տնտեսությունների ֆինանսների կառավարման հարցում օգնելու անհատական որոշումների կայացմանը:

Ֆինանսական կրթման 2021-2025 թթ. ծրագիրը կանանց, միգրանտներին և նրանց ընտանիքներին ներկայացնում է որպես ֆինանսական ներառման քաղաքականությունների թիրախային խմբեր: Միգրանտների համար հատուկ քաղաքականությունները ներառում են ֆինանսական կրթական ծրագրերի մշակում՝ ուղղված նրանց կարիքներին, համագործակցություն ՀԿ-ների հետ, որոնք զբաղվում են միգրանտների ինտեգրմամբ, ֆինանսական գրագիտության բովանդակության մշակմամբ, միգրանտների կողմից լայնորեն հայտնի և օգտագործվող հարթակներում խթանմամբ և ֆինանսական գրագիտության դասընթացների տրամադրմամբ այն քաղաքացիներին, ովքեր մտադիր են արտագաղթել աշխատանքային նպատակով:

Պարբերաբար հավաքվում են աշխատաշուկայի վերաբերյալ տվյալներ՝ ըստ միգրացիոն կարգավիճակի և սեռի: ՀՀ վիճակագրական կոմիտեն հրապարակում է աշխատաշուկայի վերաբերյալ տարեկան պեկույց, որը ներառում է տվյալներ աշխատանքային տարիքի

բնակչության, աշխատանքային գործունեության, պբաղվածության և գործազրկության վերաբերյալ, որոնք ներկայացված են ըստ տարիքային խմբերի, սեռի, ծննդյան երկրի, քաղաքացիության, կացության տեսակի, ամուսնական դրության և կրթության մակարդակի:

## 4.2. Հետագա զարգացման ներուժ ունեցող ոլորտներ

Հայաստանը դեռևս գնահատումներ չի անցկացնում՝ վերահսկելու երկրի աշխատաշուկայի պահանջարկը ներգաղթածների համար: Ճիշտ նույն ձևով, թեև կատարվում է պարբերական ազգային գնահատում աշխատաշուկայի առաջարկը մշտադիտարկելու համար, սակայն չի գնահատվում ներքին աշխատաշուկայի վրա արտագաղթի ազդեցությունը: Աշխատաշուկայի վերաբերյալ վիճակագրական կոմիտեի տարեկան հաշվետվությունները (վերջին անգամ հրապարակվել է 2021 թ.) ներառում են աշխատուժի առաջարկին նվիրված բաժին: Հաշվետվությունները հիմնված են երեք աղբյուրների վրա. աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և պետական եկամուտների կոմիտեի վարած վարչական ռեգիստրները, տնային տնտեսությունների հետազոտությունները, որոնք իրականացվում են հենց վիճակագրական կոմիտեի կողմից և տարբեր հաստատությունների կողմից հրապարակվող ցեկույցներ: Հաշվետվությունների 2-րդ բաժինը տրամադրում է գնահատում աշխատաշուկայի առաջարկի վերաբերյալ՝ ըստ այնպիսի բնութագրիչների, ինչպիսիք են տարիքը, ծննդյան երկիրը, քաղաքացիության երկիրը, կացության տեսակը, ամուսնական կարգավիճակը, կրթական մակարդակը և սեռը:

Աշխատաշուկայի պահանջարկի հիման վրա աշխատանքային միգրացիայի կառավարման ծրագրի ստեղծումը հետագա զարգացման ներուժ ունեցող ոլորտ է: Օտարերկրացիների մասին օրենքում (2006 թ., վերջին փոփոխությունը՝ 2023թ.) բացակայում են դրույթներ աշխատաշուկայի պահանջարկի հիման վրա վիզաների տրամադրման կամ հատուկ աշխատանքային հմտությունների ներգրավման նպատակով տարբեր տեսակի վիզաների տրամադրման վերաբերյալ: «Մուտքի վիզաների մասին» կառավարության որոշման մեջ (2007 թ., վերջին փոփոխությունը՝ 2022թ.) նշված է, որ վիզայի դիմումի քննությունն իրենից ներկայացնում է ստուգում, թե արդյոք դիմումատուն Հայաստանի համար անցանկալի անձերի ցանկում է և ներկայացված տվյալների իսկության ու այցի նպատակի արժանահավատության հաստատումը: Սակայն աշխատաշուկայի պահանջարկի կամ աշխատանքային հատուկ հմտությունների առնչությամբ ոչինչ ասված չէ:

Միգրանտների համար աշխատաշուկայում գենդերային հավասարությունը խթանող հատուկ դրույթների սահմանումը հետագա զարգացման ոլորտ է: Սահմանադրությունը (2015 թ., վերջին փոփոխությունը՝ 2020 թ.) ամրագրում է տղամարդկանց և կանանց իրավահավասարությունը (հոդված 30) և թվարկում է հավասարության խթանումը տղամարդկանց ու կանանց միջև որպես պետության 16 գերակայություններից մեկը՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում (հոդված 86): «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը (2013թ., վերջին փոփոխված՝ 2020թ.) արգելում է հավասար աշխատանքի դիմաց անհավասար վարձատրություն, աշխատավարձի բարձրացում/նվազեցում և սեռով պայմանավորված աշխատանքային պայմանների վատթարացում (հոդված 6): Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թթ. ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը (2019) սահմանում են «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» օրենքի կիրարկման հինգ առաջնահերթություններ, ըստ հետևյալի՝ կանանց և տղամարդկանց հավասար մասնակցություն կառավարական որոշումների ընդունմանը, տնտեսական հնարավորությունների ավելի լայն շրջանակ կանանց համար, կրթության և գիտության ոլորտներում մասնագիտական զարգացման հավասար հասանելիություն և

հնարավորություններ, հավասար հնարավորություններ առողջապահության ոլորտում և գենդերային խտրականության կանխարգելում: Սակայն դա չի վերաբերում միգրանտներին:

Աշխատանքային միգրանտների աշխատանքի ընդունման էթիկական կողմին նպաստող միջոցառումների մշակումը դիտարկվում է որպես հետագա զարգացման ներուժ ունեցող ոլորտ: Սահմանադրությունն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության, ինչպես նաև աշխատանքի պաշտպանության իրավունք, և արգելում է հարկադիր աշխատանքը, սակայն հատուկ հղում չի անում աշխատանքի ընդունման էթիկական կողմին (հոդված 57):

«Օտարերկրացիների մասին» օրենքում նշված է, որ միգրանտների ապօրինի կբաղվածությունը, այդ թվում՝ կբաղվածությունն առանց աշխատանքի թույլտվության, ինչպես նաև թրաֆիքինգի ու շահագործման կասկածելի դեպքերը, հաղորդվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը: Սակայն օրենքը չի պահանջում, որ աշխատանքային միգրանտների աշխատանքի ընդունման այդ թվում՝ գովազդի, ինֆորմացիայի տարածման, ընտրության, փոխադրման, աշխատանքի տեղավորման և ծագման երկիր վերադարձի դեպքում հարգի, պաշտպանի և ապահովի միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքներն և աշխատանքային չափանիշները :

Սակայն կազմակերպությունների, անհատների և անհատների խմբերի կողմից հսկողության ուժեղացումը աշխատուժի հավաքագրման նկատմամբ, ինչպես ներգաղթի, այնպես էլ արտագաղթի դեպքում, Հայաստանի միգրացիայի պետական կառավարման հայեցակարգի (2021) նպատակներից մեկն է:

# 5 ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՍՑԵԱԳՐԵԼ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## 5.1. Միգրացիայի կառավարում. կարգացած ոլորտների օրինակներ

Հայաստանի Հանրապետությունում միջոցներ են նախատեսված ճգնաժամերից առաջ, ընթացքում և հետո բնակչությանը օգնություն ցուցաբերելու համար: «Սեյսմիկ պաշտպանության մասին» օրենքը (2002թ., վերջին փոփոխությունը՝ 2020թ.) ծրագիր է նախատեսում երկրում երկրաշարժերի կառավարման համար: Այն որոշակիորեն ներառում է օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց՝ որպես անհատներ, որոնց նկատմամբ օրենքի դրույթները կիրառվում են: Ներքին գործերի նախարարությունը (ՆԳՆ) պատասխանատու է Հայաստանում աղետների ռիսկերի կառավարման համար՝ ներառյալ արտակարգ իրավիճակների ժամանակ քաղաքացիական պաշտպանությունը, արտակարգ իրավիճակներից տուժած մարդկանց տարհանումը և ապաստանը, արտակարգ իրավիճակների կանխումը և դրանց հետևանքներից վերականգնումը, ինչպես նաև արտակարգ իրավիճակների և աղետների հետ կապված տեղեկատվության կառավարումը: Արտակարգ իրավիճակների նախարարության (գործող մինչև 2023 թվականի հունիս) գործառույթներն իրականացնում է ՆԳՆ ենթակայությամբ գործող փրկարար ծառայությունը: ՀՀ ՆԳՆ կանոնադրությունը հաստատելու մասին որոշման համաձայն (2023 թ.) Ոստիկանությունը, փրկարարական ծառայությունը և Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը (ՄԿԾ) գործում են ՆԳՆ-ի ներքո (հոդված 36):

Ներքին գործերի նախարարությանն առընթեր Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը պարբերաբար հավաքում և տվյալներ է հրապարակում աղետների հետևանքով տեղահանվածների վերաբերյալ: Փախստականների, փախստականների նման իրավիճակում հայտնված մարդկանց, ապաստան հայցողների, ներքին տեղահանվածների և քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ տվյալները հավաքվում են կառավարության կողմից և հրապարակվում ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի ամենամյա Գլոբալ միտումների զեկույցում (վերջին անգամ հրապարակվել է 2022 թ.):

Հայաստանը միջոցներ է նախատեսում ճգնաժամերի ժամանակ արտասահմանում ապրող քաղաքացիների աջակցության համար: Արտասահման մեկնող կամ օտարերկրյա պետություններում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին առաջարկվում է իրենց անձնական տվյալները ներկայացնել արտաքին գործերի նախարարություն՝ իրենց իրավունքները և շահերը պաշտպանելու և արտակարգ իրավիճակներում աջակցություն ստանալու համար՝ Հայաստանի Հանրապետության «Հյուպատոսական ծառայության մասին» օրենքին (1996թ., վերջին փոփոխությունը՝ 2021թ.) համապատասխան: Դեսպանատների և հյուպատոսությունների կողմից մատուցվող հյուպատոսական ծառայությունները ներառում են անձնագրերի, վերադարձի վկայականների, մուտքի վիզաների տրամադրում, քաղաքացիական գրանցում, վկայականների ստուգում և ատեստավորումների տրամադրում:

Գործում են կապի համակարգեր՝ տեղեկություններ ստանալու ճգնաժամերի կարգացող բնույթի և այն մասին, թե ինչպես օգտվել օգնությունից: «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի (1998, փոփոխվել է 2023 թվականին)համաձայն՝ հաղորդակցությունը արտակարգ իրավիճակների ժամանակ

բնակչության պաշտպանության մի քանի միջոցառումներից առաջինն է: Փրկարար ծառայությունը պատասխանատու է բնակչությանը արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար, որը հասանելի է ՆԳՆ կայքում:[38] «Սեյսմիկ պաշտպանության մասին» օրենքը նախատեսում է վաղ ահազանգման համակարգ՝ որպես սեյսմիկ պաշտպանության համակարգի բաղադրիչներից մեկը:

Կառավարությունը կիրառում է դրույթներ, որոնցով բացառություններ է անում ներգաղթի ընթացակարգերից այն միգրանտների համար, որոնց ծագման երկիրը ճգնաժամ է ապրում: Համաձայն «Օտարերկրացիների մասին» օրենքի (2006թ., վերջին փոփոխությունը՝ 2023թ.), Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցող օտարերկրացիները կարող են մնալ նրա տարածքում ոչ ավելի, քան 72 ժամ, սակայն այն միգրանտները, ում ծագման երկիրը գտնվում է ճգնաժամի իրավիճակում, ապատվում են այդ պահանջից (հոդված 13): Բացի այդ, համաձայն «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի (2008, վերջին փոփոխությունը՝ 2021 թ.), Հայաստանը ժամանակավոր պաշտպանություն է տրամադրում օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, ովքեր լքում են իրենց ծագման երկրները պանգվածային բռնության, օտարերկրյա ներխուժման, ներքին բախումների, մարդկանց իրավունքների պանգվածային ոտնահարման կամ հասարակական կարգին սպառնացող այլ իրադարձությունների պատճառով (հոդվածներ 3 և 6):

## 5.2. Հետագա պարգացման ներուժ ունեցող ոլորտներ

Հայաստանի արտակարգ իրավիճակների կառավարման ծրագիրը սահմանափակ միջոցներ ունի միգրանտներին հատուկ օժանդակություն հատկացնելու ճգնաժամից առաջ, ընթացքում և հետո: ՀՀ ՆԳՆ կանոնադրությունը հաստատելու մասին որոշումը (2023թ.) և Փրկարար ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին որոշումը (2005թ. վերջին փոփոխված 2023թ.) միգրանտներին չեն վերաբերում: Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին օրենքը ներառում է արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ (ներառյալ՝ ճառագայթման, քիմիական և կենսաբանական աղտոտվածության մակարդակի մոնիթորինգ և հսկողություն և հանրային իրազեկության բարձրում), ինչպես նաև օգնության տրամադրում ճգնաժամերի ժամանակ և դրանցից հետո (ներառյալ՝ ապաստան, տարհանում, կապ, սանիտարական աշխատանքներ և կամավորների ներգրավում վերականգնման աշխատանքներում): Այնուամենայնիվ, օրենքը միգրանտների վերաբերյալ հատուկ հղում չի պարունակում:

Աղետների ռիսկի նվազեցման ռազմավարությունը և դրա իրականացման գործողությունների ծրագիրը (2017թ.) ներառում էին տեղահանման հատուկ դրույթներ, ինչպես նաև աղետների մեղմացման, նախապատրաստման, արձագանքման և վերականգնման միջոցառումներ: Այնուամենայնիվ, այս ռազմավարությունն այլևս ուժի մեջ չէ: Աղետների ռիսկի կառավարման 2023-2030 թվականների նոր ռազմավարությունը և 2023-2026 թվականների գործողությունների պլանը դեռևս ընդունման փուլում են, սակայն ռազմավարությունը չի վերաբերում տեղահանվածներին: Բացի այդ, Հայաստանի Կառավարության 2021-2026 թվականների ծրագրում տեղահանվածներին վերաբերող միջոցառումներ չկան (օրինակ՝ փախստականների կամ ներքին տեղահանվածների վերաբերյալ դրույթներ): Հետևաբար, տեղահանմանն առնչվող միջոցառումների ներառումը

[38] Այս գործառույթը նախկինում գտնվում էր Արտակարգ իրավիճակների նախարարության իրավասության ներքո (գործում է մինչև 2023 թվականի հունիսը), որի վեբկայքում ներառված էր աղետների մասին տեղեկատվություն (օրինակ՝ գտնվելու վայրը, ներգրավված անձինք, տուժածները, եթե այդպիսիք կան, և փրկարարական աշխատանքներ): Արտակարգ իրավիճակների նախարարությունը նաև ժամանակին թերթ է հրատարակել ինչպես տպագիր, այնպես էլ համացանցային տարբերակով, և բնակչությունը դեռևս կարող է օգնության համար դիմել 911 թեժ գծի և սոցիալական ցանցերի միջոցով:

կարգացման ազգային ռազմավարություններում համարվում է հետագա կարգացման ներուժ ունեցող ոլորտ:

Հայաստանը մարդու շարժունության նկատառումները չի ներառել իր բնապահպանական և կլիմայի փոփոխության քաղաքականութեունների մեջ, ինչպիսիք են Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թթ. միջոցառումների ցանկը (2021) և Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թթ. ազգային մակարդակով սահմանված գործողությունները: Այնուամենայնիվ, ՄՄԿ-ն աջակցում է Հայաստանի կառավարության հարմարվողականության ազգային ծրագրին՝ մարդկային շարժունությունը ինտեգրելով կլիմայի փոփոխությանն առնչվող որոշումների կայացման հետ կառավարման տարբեր մակարդակներում և աջակցելով կառավարությանը՝ կլիմային առնչվող գործողությունների համատեքստում միգրացիայի, շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության միջև գոյություն ունեցող կապի մասին ավելի լավ պատկերացում կազմելու համար:

Ճգնաժամի ժամանակ բնակչության լայնածավալ տեղաշարժերը կառավարելու համար արտակարգ իրավիճակների պլանի մշակումը հետագա կարգացման ոլորտ է: Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը (2011թ., վերջին փոփոխությունը՝ 2013թ.) վերաբերում է բնակչության ներքին խոշոր տեղաշարժերին, սակայն դեռ չի ընդունվել: Այն ներառում է կառավարման սխեմա, արտակարգ իրավիճակների ծանուցման և հաղորդակցության սխեմաներ, հետախուզական պլան, փրկարարական և վերականգնման միջոցառումներ, ինչպես նաև հաշվարկներ տեղահանվածներին բժշկական օգնության, ապաստանի, սննդի, հագուստի և այլ անհրաժեշտ պարագաների տրամադրման վերաբերյալ:

# 6 ԱՊԱՀՈՎԵԼ, ՈՐ ՄԻԳՐԱՑԻԱՆ ԼԻՆԻ ԱՆՎՏԱՆԳ, ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՈՒ ԿԱՆՈՆԱՎՈՐ

## 6.1. Միգրացիայի կառավարում. պարգացած ոլորտների օրինակներ

Ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) պարտականությունը, որը գործում է վարչապետի աշխատակազմին առընթեր, ինտեգրված սահմանային հսկողության և անվտանգության ապահովումն է: ԱԱԾ լիազորություններն, ըստ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» որոշման 14-րդ հոդվածի 2-րդ մասը (2018թ. վերջին փոփոխված՝ 2023թ.), ներառում են հետախուզությունը, հակահետախուզությունը, պետական սահմանի հսկողությունը և հանցավոր գործունեության դեմ պայքարը: ԱԱԾ սահմանապահ զորքերը պատասխանատու են պետական սահմանի վերահսկողության համար: Նրանց հանձնարարված է ստուգել անձանց, տրանսպորտային միջոցների և բեռների փաստաթղթերը, ձերբակալել սահմանն ապօրինի հատած անձանց և առգրավել ապօրինի տեղափոխվող ապրանքները՝ «Սահմանապահ զորքերի մասին» օրենքին (2001թ., վերջին փոփոխությունը՝ 2018թ.) համապատասխան:

